ՀՀ Արմավիրի մարզի Արտաշարի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի/ծածկագիր 3.1-1/ համայնքի ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար*:

1.Առաջատար մասնագետը՝
ա/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով:
բ/ իր լիազորությունների սահմաններում անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ,հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:
գ/քարտուղարի հանձնարարությամբ, օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի և գույքահարկի հավաքում/գանձում/:
դ/քարտուղարի հանձնարարությամբ կազմում և սահմանված կարգով ներկայացնում են հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց ցուցակը համապատասխան միջոցներ կիրառելու համար:
ե/ քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է տեղական տուրքերի և վճարների համայնքի վարչական սահմաններում տրվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձման աշխատանքները:
զ/իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
2.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ առնվազն միջնակարգ կրթություն:
3.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2016թ. նոյեմբերի 14-ին ժամը 11 ^{00}-ին Արտաշարի համայնքապետարանում:
Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով/ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/:
- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թ. մարտի 3-ի N310 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, ինչպես նաև դատական կարգով չի ճանաչվել անգործունակ և սահմանափակ գործունակ:
- Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային, տեղամասային կցագրման վկայականի պատճեններ:
- Մեկ լուսանկար 3Х4 չափսի:
- Անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արմավիրի մարզի Արտաշարի համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն/հասցեն՝ ք.Արմավիր Աբովյան 71, հեռ. 0237-2-07-70/: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10 ^{00} – 16 ^{00} բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2016թ. հոկտեմբերի 25-ը: